ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ. Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը. Զանգակ –97 հրատ., Երևան, 2000, 448 էջ:

Հեղինակը հայտնի անուն է Հայաստանի ոչ միայն պատմաբանների, այլև՝ ընթերցողների լայն շրջանում: Արխիվային վավերագրերի և նյութերի ընդգրկմամբ նրա հրապարակումների մեջ առանձնանում է Գարեգին Սրվանձտյանին նվիրված ուսումնասիրությունը, որը ժամանակին արժանացել է մասնագետ պատմաբանների բարձր գնահատականին: Ակայն պատմաբանի ստեղծագործական ուղու գլխավոր արգյունքը Մկրտիչ Խրիմյանին (1820-1907) նվիրված մեծածավալ և մեծարժեք ուսումնասիրությունն է:

Խրիմյան մարդը, գրողը, հասարակական գործիչը, եկեղեցականը բացառիկ երևույթ էր հայ ժողովրդի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տարիների պատմության մեջ:

Ծնված լինելով ժողովրդական տառապանքի ընգերքում, Խրիմյանն իր գիտակցական կյանքն անմնացորդ նվիրաբերեց թուրքական գեհենում տվայտող արևմտահայության ազատագրության գործին, մշտապես դտնվեց ազգի համար ամենաբախտորոշ ժամանակաշրջանի փոթորկահույզ ալեբախումների հորձանուտում:

Խրիմյանի ամբողջ կյանքն ազգանվեր վազք էր: Այդ մարդը մարմնավորում էր հարազատ ժողովրդի պայքարի ոգին: Մարդկային բարձր առաքինություններով ու հսկայական հմայքով նա կարողանում էր ալեկոծել հազարավոր սրտեր, իր անհատնում եռանդը փոխանցել ժողովրդական զանգվածներին, նրանց տանել իր հետևից և դուրս բերել ազատագրական կռվի ճամփաները:

Խրիմյանի նկատմամբ ամբողջ ազգի տածած մաքուր ու անեղծ զգացումը, համընդհանուր համակրանքը մարմնավորվել էին զանգվածների կողմից նրան տված «Հայրիկ» համեստ անվան մեջ:

Ահա եզակիորեն հոյակապ այս անհատի մեծ կյանքին ու բազմաբեղուն գործունեությանն է նվիրված քննարկվող գիրքը:

Մեռանում առաջին անդամ այս աշխատության հեղինակն է համակողմանի ուսումնասիրել Խրիմյան հասարակական գործչի, եկեղեցականի ու գրողի գործունեությունը: Հայց գիրքը մի անձի ապրած երկարատև և իմաստալից կյանքի լուսաբանումը չէ սոսկ: Այդ կյանքի լեցուն էջերը անխզելիորեն շաղկապված են քննարկվող ժամանակաշրջանի բախտորոշ իրադարձություններին: Հետևապես, գրել Մկրտիչ Խրիմյանի մասին, ասել է թե՝ գրել հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մի տևական շրջափուլի մասին: Աշխատության հեղինակը հետապնդել է հենց այդ նպատակը՝ իր հերոսի մասին պատումը հյուսելով իրադարձությունների և դեպքերի լայն համապատկերի վրա:

Զթուլացող հետաքրքրությամբ են ընթանում Խրիմյանի կյանքի առաջին շրջանին նվիրված էջերը: Մկրտիչն ապրում էր հայրենի հողի գրկում, ըմբոշխնում առասպելական ժողովրդի հին-հին հիշատակները, հայրենիքի ողբերգական վեհությունն ու գեղեցկությունը: Հենց այս շրջանում է, որ, ինչպես իրավացիորեն նշված է աշխատության առաջին գլխում, նրա զգայուն սիրտը ընդհարվում է թուրքական դաժան ու ավերիչ ռեժիմի սարսափներին, իր հարազատ ժողովրդի տառապալից ստրկությանը, նրա չարքաշ համբերությանը, նաև՝ կորովին:

Հետո դալիս են հուզմունքով, եռանդով ու ավյունով լի հետագա տարիները՝ կազմելով մաքառումների և ըմբոստացումների մի երկար շղթա, որը ձգվում է մինչև մեծ կյանքի վախճանը:

Իր նյութը գերազանց տիրապետող պատմաբանը մեծ հմտությամբ քննում է Խրիմյանի հասարակական գործունեության սկզբնավորման ժամանակաշրջանի իրողությունները, ցույց տալիս, թե ինչպիսի

համառ աշխատասիրությամբ, մտավոր ու ֆիզիկական ունակությունների ինչպիսի գերլարումով ընդամենը մի քանի տարում նա կարողանում է ձեռք բերել հսկայական համբավ ու անառարկելի հեղինակություն ողջ հայության մեջ:

Աշխատության հեղինակն իրավացի է, երբ գրում է, թե հենց Խրիմյանի ջանքերով էր, որ Կ. Պոլսի հայությունը սկսեց ճանաչել ու սիրել Հայաստանը: Այս ժամանակահատվածում է, որ նա կարողացավ ժամանակի համար զարմանալի ու հանդուգն գործեր կատարել՝ ուղղակի Արևմտյան Հայաստանի սրտում հիմնել դպրոց, տպարան, հրատարակել առաջին հայ հանգեսը Հայաստանում՝ «Արծիվ Վասպուրականին»:

Գրքում (գլուխ 2) ցույց է տրված, թե Վարագա վանքը լուսավորության փարոս գարձնելու իր ջանքերում ինչպիսի անհաղթահարելի թվացող խոչընդոտների էր հանգիպում Հայրիկը: Պոլսից տպարան բերելու համար տգետ աբեղաներն այպանում էին նրան, ասելով. «Ի՞նչ այս երկաթին կտորները առիր բերիր մեզի»: Հետագեմ ուժերի սագրանքներն անկարող եղան Խրիմյանին շեղել իր ճանապարհից:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ գնելով մեծաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթեր ու նյութեր, գրքի հեղինակն ընթերցողներին է ներկայացրել այն բեղմնավոր գործունեությունը, որ Մկրտիչ Խրիմյանը ծավալել էր որպես Տարոնի հոգևոր առաջնորդ և Ս. Կարապետ վանքի վանահայր (գլուխ 3): Իբրև ժողովրդական փայլուն տրիբուն, նա եկեղեցու բեմերից ունկնդիրներին անդադրում քարոզում էր. «Մարգ եղե՛ք, կրթվեցե՛ք, լուսավորվեցե՛ք և քաջ եղեք»: Ցույց է տրված, թե Հայրիկն ինչպես էր անձանձիր մտրակում հայերի մտածողությունը և նրանց մղում ազգային գիտակցության, հորդորում տեր կանգնել իրենց մարդկային արժանապատվությանը, կոչում ազատասիրական ոգորումների:

Խրիմյանի կյանքի հաջորդ շրջանը պայմանականորեն կարելի է համարել վարչաքաղաքական շրջան, որն իր մեջ ներառում է 1869-1893 թվականները: 1869 թ. Հայրիկը կոչվում է պատրիարքության և իր բարձր պաշտոնի բերումով դառնում է Թուրքահայության պահանջների թարգմանը Բ. Դռան մոտ:

Հայաստանից եկող աղիողորմ խնդրանքներն ու բողոքները մշտապես հանդիպում էին իշխանությունների անտարբեր վերաբերմունքին: Ավելին, նրանք ամեն ինչ անում էին անտանելի դարձնելու հայության կյանքը. անհետևանք էին մնում սուլթանական թագրիրները, քրդերն օր-օրի ուժեղացնում էին իրենց հարստահարումները և ասպատակությունները: Գրքի 4-րդ գլխում բերված բազմաթիվ օրինակներով աշխատության հեղինակը ցույց է տալիս, թե ըմբոստ ու խիզախ պատրիարքն ինչպիսի համարձակությամբ ու հետևողականությամբ էր իր ժողովրդի բողոքի ու արդար պահանջների ձայնը հնչեցնում Եըլդըզ Քեոշկում և նենգամիտ կառավարության մոտ: Խրիմյանը չէր ընկրկում իշխանությունների սպառնալիքների առջև, բայց սրանք տագնապած էին և ամեն առիթ օգտագործում էին նրան հեռացնելու պատրիարքի աթոռից: Ի վերջո, 1873 թ., այդ բանը նրանց հաջողվում է:

Աշխատության մեջ ցույց է տրված, որ պատրիարքությունից հրաժարվելուց հետո ժողովրդական շահերի խիզախ պաշտպանը չընկճվեց բախտի հարվածներից, այլ շարունակեց նույն եռանդով ծառայել ազգին:

Պատմաբանի հմուտ գրիչը ընթերցողին է ներկայացնում (գլուխ 5 և 6) հայության համար բախտորոշ 1870-80-ական թվականների իրադարձությունները և այդ խորապատկերի վրա՝ 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի օրերին և դրան հաջորդած ժամանակաշրջանում Խրիմյանի գործունեությունը:

Արևմտահայության ողբալի կացությունը բարվոքելու նպատակով Բեռլին մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Խրիմյանն իր գործակիցների հետ մեծ ջանքեր թափեց, որպեսզի բազմատանջ արևմտահայության վրա բևեռի եվրոպական կառավարությունների հետաքրքրությունը և ուշադրությունը, նրանց մոտ համակրանք առաջացնի հարստահարվող ժո-

ղովրդի արդարացի պահանջների նկատմամբ:

Ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձին քաջատեղյակ է. Կոստանդյանը կարողացել է նաև թափանցել մեծ տերությունների դիվանագիտական որոգայթների լաբիրինթոսը, որի մեջ ընկել էին հզորների խարդավանքներին անտեղյակ և դեռ վառ հույսեր փայփայող հայ պատվիրակները: Սակայն դառն իրողություններին սառը ցնցուղով սթափեցրին նրանց: Եվրոպան բնավ տրամադիր չէր Օսմանյան կայսրությունում իր շահերը վնասելու գնով, մարդասիրական մղումներով օգնության ձեռք մեկնել թուրքական բռնակալության տակ հեծող բազմաչարչար հայությանը:

Բեռլինից վերադարձած Խրիմյանը պատգամ հղեց հայ ժողովրդին. տեր կանգնել սեփական իրավունքներին՝ հենվելով սեփական ուժերի վրա: Օրակարգում էր դրվում թուրքական բռնակալությունից զենքով փրկվելու խնդիրը. զինվելու անհրաժեշտության մասին խրիմյանական կոչերը դառնում էին պայքարի ուղեցույց: Դիմելով իր ժողովրդին, նա ասում էր. «Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք այդ չքոտի քուրդերեն, քանի որ անզեն, անեղջյուր, անասպար կապրիք», բայց չէ որ «դուք մարդ եք, ձեռք և բազուկ ունիք»: Նա շեշտում էր, որ ցանկալի ազատությունն անհնար է առանց զոհի ու արյան: Իսկ այդ արյան գինը կբարձրանա և զոհերի թիվը քիչ կլինի, եթե հայն իր ձեռքում բռնած ունենա զենքը. «Վասնզի երբ քուրդ ու տաճիկ տեսնեն, թե քրիստոնյա ալ մեջքը սուր կախեր և իրենց նման զինվոր եղեր է, բոլորովին պիտի փոխվին զանի իրենց հավասար տեսնելով»:

Խրիմյանի մեծ ու ազնիվ գործերից մեկը Թուրքահայաստանի բնակչությունը սովից փրկելու ուղղությամբ նրա թափած ջանքերն էին, որոնց լուսաբանմանը նվիրված են աշխատության շատ էջեր: Հատկապես շեշտված է, որ Հայրիկը առանց ազգի ու կրոնի խտրության հաց ու ալյուր էր բաժանում բոլոր սովյալներին՝ վաստակելով նրանց երախտագիտությունը:

Գրքում հանգամանորեն խոսք է գնում Խրիմյանի երուսաղեմյան աքսորի մասին: Դա այն ժամանակն էր, երբ տաճկահայ դատը մտել էր եռուն ու հրատապ շրջանի մեջ, երբ հիսուն տարվա ընթացքում Հայրիկի ցանած սերմերը արգասավորվում էին՝ հայության մեջ առաջ բերելով դիմադրական հզոր հոսանք:

Կյանքի վերջին մեկ ու կես տասնամյակը Հայրիկը, որպես Ամենայն հայոց կաթողիկոս, անցկացրեց Էջմիածնի պատերից ներս: Այդ ժամանակաշրջանի նրա գործունեությունը լուսաբանված է աշխատության վերջին՝ 6-րդ գլխում: Դա հայության համար արյունալի նոր նախճիրներով ու աննախադեպ կոտորածներով լի ժամանակաշրջան էր: Հեղինակը ցույց է տալիս ծերունի հայրապետի հոգեկան տվայտանքները արևմտահայության 1895-1896 թթ. զանգվածային ջարդերի օրերին, ռուսական իշխանություններից նրա կրած հիասթափությունները: Խրիմյանն ականատես եղավ դոլիցինյան ռեժիմի դաժանություններին. հայկական դպրոցների փակում, անիմաստ հալածանքներ, եկեղեցական կալվածների գրավում: Տեսավ նաև հայ մարտիկների անվեհեր կռիվը 1905-1906 թթ. Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների ժամանակ: Այս բոլոր իրադարձություններին նա, իբրև ժողովրդի հոգևոր առաջնորդ, միջամտում էր կոնդակներով, բողոքի թղթերով, քարոզներով:

Աշխատության մեջ առանձին խոսակցություն է գնում Մկրտիչ Խրիմյանի թողած դրական ժառանգության մասին: Իր երկարատև կյանքի ընթացքում Հայրիկը ստեղծել է բազմաթիվ դրական երկեր՝ պարզ, կրթիչ և աշխարհիկ ոգով: Այո, աշխարհիկ, որովհետև նրա ինչպես գրչի արգասիքները, այնպես էլ եկեղեցական քարոզները հյուսված էին ոչ թե կրոնական սխոլաստիկ կանոնների հենքի, այլ ժողովրդի կենդանի կյանքի վրա:

Գրական իր փայլուն ստեղծագործություններում Խրիմյանը զարգացրել է համամարդկային վեհ գաղափարներ, միաժամանակ լուսարձակել հարազատ ժողովրդի անհուն ցավերը, նրան կոչել ինքնաճանաչողության ու կազմակերպվածության,

զգաստության և ըմբոստության: Այդ են վկայում նրա «Հրավիրակ Արարատյան» (1850), «Հրավիրակ երկրին ավետյաց» (1851), «Հիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ»(1876), «Դրախտի ընտանիք» (1876), «Վանդույժ» (1877), «Հայգույժ» (1877), «Սիրաք և Սամվել» (1878), «Պապիկ և թոռնիկ» (1894), «Հարեենորոդմանց ծրագիր» (1909) և այլ աշխատություններ:

Է. Կոստանդյանը կատարում է Խրիմյանի աշխատությունների պատմաքննական հմուտ վերլուծություններ, միաժամանակ ցույց է տալիս իր ակտիվ վերաբերմունքը գրանց բովանդակության, գրանցում արծարծված խնդիրների նկատմամբ: Նա իրավացիորեն ընդգծում է, որ Խրիմյանի աշխատություններում տեղ գտած վեհ դաղափարներից, մտքերից, հորդորներից շատերն այսօր էլ արդիական են, որ Հայրիկի տված բարոյական շատ դասեր ու ավանդներ այժմ էլ պահպանում են իրենց հնչեղությունը, հաստատելով հին ու նոր բարոյական բազմաթիվ չափանիշներ և արժեքներ: Հեղինակը գրանցից առանձնացնում է մի քանիսը.

1. Որքա՜ն այժմեական են հնչում ազգային հարստահարիչներին՝ աշխատավոր ժողովրդի քրտինքով հղփացած փողամոլներին, ուրիշի աշխատանքի արդյունքները հափշտակողներին, համփաներին ու զոռբաներին ձաղկող խրիմյանական խոսքերը: Միաժամանակ Հայոց Հայրիկն ընդգծված համակրանք ուներ դեպի աղքատ ու զրկված խավերը:

Վերլուծելով Խրիմյանի «Ժամանակ և խորհուրդ յուր» աշխատությունը, մենագրության հեղինակը նկատում է, որ առաջ քաշելով սոցիալական սուր հարցադրումներ, Հայրիկը դրանով իսկ բարձրացել էր դասակարգերի դոյության ըմբռնման մակարդակի:

2. Անարդար կլիներ անտեսել Ներսես Աշտարակեցու, Մատթեոս Իզմիրլյանի, Մաղաքիա Օրմանյանի և ուրիշ եկեղեցականների հայրենասիրական գործերը, եղել են նաև ուրիշ լավ, սրտացավ հոգևորականներ, բայց անհնարին է ժխտել, որ հոգևոր հիերարխիան թեև դարեր շարունակ ապրել է աշխատավոր մարդկանց քրտինքի հաշվին, բայց միշտ կանգնած է եղել իշխանություն ունեցողների ու փողատերերի կողքին. հոգևոր հայրերի նպատակներից մեկը եղել է խոնարհ վիճակում պահել ժողովրդին, թույլ չտալ նրա ըմբոստացումը:

Լինելով հոգևոր դասի ներկայացուցիչ, Խրիմյանը, սակայն, իր աշխատություններում և քարոզներում բուռն քննադատության էր ենթարկում ժամանակի հայ կղերին՝ քսությունների ու մատնությունների, պաշտոնամոլության ու արծաթասիրության համար, չարիք էր համարում էջմիածնում տիրող վարք ու բարքը: Հայրիկը մշտապես շեշտում էր, որ կրթության և լուսավորության գործը պետք է լիովին դուրս բերել եկեղեցու իրավասությունների ոլորտից և ամբողջովին հանձնել աշխարհիկ մտավորականությանը:

Ներկայումս, ցավոք, Հայաստանում գիտական աթեիզմը ենթարկված է բանադրանքի և ամենուր մղվում է կրոնի անսանձ պրոպագանդ, մոռացության են տրված Վոլտերի և Մոնտեսքյոյի, Բաֆֆու և Թումանյանի, գիտության և մշակույթի անցյալի լուսավոր անունների հակակրոնական պայքարի ավանդները, երեկվա ծայրահեղ աթեիստներից շատերը դարձել են կրոնի կատաղի պրոպագանդիստներ, միջնադարյան կղերական դաղափարները թափանցում են հանրապետության աշխարհիկ դպրոցները, սովահար երկրում եկեղեցաշինության մոլադար վազք է, իսկ վարդապետներն ու եպիսկոպոսները մի պտղունց արծաթի համար աղոթքներով օրհնում են գիշերային գվարճալիքների նորաբաց օբյեկտներ, որոնցում ավերվում է նոր սերնդի ոգին:

Ահա այս ամեն արհավիրքի դեմ այսօր հառնում է խրիմյանական խղճի մաքրությունը, Հայրիկի բարոյական վեհ նկարագիրը:

3. Խրիմյանը փոքր ազգերի, այդ թվում՝ հայ ազգի, հարատևության գաղտնիքը տեսնում էր ընտանիքի ամրության, ընտանեկան սրբությունների և բարոյական արժեքների պահպանման մեջ, գովք էր հյուսում հայկական բազմամարդ գերդաստաններին: Նա նշում էր, որ հայ ընտա-

նիքների քայքայումը հետևանք է երկու հիմնական պատճառի. մի կողմից շռայլ ու ցոփ կենցաղի, այն է՝ խաղամոլության, հարբեցողության, անառակության, ցանկասիրության, մյուս կողմից՝ ծայրաստիճան չքավորության:

Ցավով ենք նշում, որ մասսայական չքավորության և դրա զանազան դրսևորումների պատճառով ներկայումս մեզանում խարխլվում ու քայքայվում են բազմահազար հայ ընտանիքներ, երիտասարդության մի ստվար զանգված զրկված է ընտանիք կազմելու հնարավորությունից, վտանգավոր չափեր է ընդունել ծննդաբերության անկումը Հայաստանի Հանրապետությունում և Արցախում:

4. Իր աշխատություններում և քարոզներում Մկրտիչ Խրիմյանը ցավով էր անդրադառնում պանդխտության հարցին, որի գնալով մեծացող ծավալները դիտում էր որպես ազգային գոյության սպառնալիք: Ահագնացող արտագաղթի մեր օրերում որքա՜ն արդիական են օտար ափերում բարիքներ ձեռք բերելու մղումով նվիրական վայրերից հեռանալ ձգտող հայորդիներին ուղղված նրա կոչերը: Հայրիկը հորդորում էր. «Ո՛վ որդիք հայոց, մի հեռանայք, սիրեցեք Մասիսը, յուր տապան,... մշակեցեք նոցա ձեռնատունկ այդին՝ Այրարատ դաշտը: ... Մասիսը ձեր հայրենի սեփական տունն է, թող չեն մնա ձեր տունը»:

5. Միանգամայն իրավացի է մենագրության հեղինակը, երբ շեշտում է, թե նախկինում եվրոպական, հատկապես անգլիական, կողմնորոշում ունեցող Խրիմյանը Բեռլինի կոնգրեսից հետո, հատկապես 1880-ական թվականների կեսերից սկսած, իր ժողովրդի փրկության հույսը ամբողջովին կապել էր Ռուսաստանի, ռուս ժողովրդի ազատագրական առաքելության հետ, չնայած ականատես է եղել Ալեքսանդր III ցարի, իսկ հետագայում նաև՝ Կովկասի կառավարիչ Գոլիցինի վարած հակահայկական քաղաքականությանը: Ավելին, իր կյանքի վերջին երեսուն տարում Խրիմյանը փայփայում էր ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի գրավման իդեան:

Խրիմյանի ռուսական կողմնորոշումը միանգամայն համահունչ է հեղինակի՝ նույն խնդրի վերաբերյալ տեսակետին, որն իր աշխատության մեջ հանդես է դալիս որպես հայ-ռուսական դարավոր բարեկամության հետևողական պաշտպան, ջերմ զգացմունքներ է տածում Ռուսաստանի, ռուս ժողովրդի ու նրա կուլտուրայի նկատմամբ:

Հաճելի է արձանագրել, որ փաստալից ու կուռ տրամաբանությամբ գրված խնդրո առարկա այս գիտական աշխատության մեջ նվազ են թերությունները և մենք, իբրև գրախոս, դժվարին կացության մեջ ենք՝ ավանդույթի համաձայն պարտավորված լինելով, այնուամենայնիվ, որոշ դիտողություններ անելու:

Իր հերոսի նկատմամբ տածած անկեղծ հիացումը գրքի հեղինակին կաշկանդել է որոշ ճշմարտություններ ասել Հայրիկի կաթողիկոսական տարիներին էջմիածնում տիրող վարք ու բարքի մասին. հարկ չկա ամեն ինչ արդարացնել ազգային-ազատագրական շարժման մեջ, քանի որ հայոց երկարատև պայքարում եղել են նաև ճակատագրական սխալներ. գրքում միասնական թուրք ազգի գաղափարն արտաբերված է օսմանիզմից, այնինչ այդ գաղափարը երիտթուրքական շարժման ծնունդ էր (թուրքիզմ):

Ինչպես տեսնում ենք, մեր դիտողություններն աննշան են այն մեծ աշխատանքի դիմաց, որ կատարել է պատմաբան Էմմա Կոստանդյանը: Նրա գիրքը հայ պատմագրության վերջին տարիների կարևոր նվաճումներից է: Աշխատությունը պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլև Պատմության ինստիտուտին, որի գիտական մթնոլորտում է ստեղծվել այն: Մենագրության բազմաթիվ էջեր ընթերցողին պատճառում են նաև դեղագիտական հաճույք: Նույնիսկ շատ տարիներ արևմտահայոց պատմությամբ զբաղվող մասնագետներից շատերն այս ուսումնասիրության մեջ իրենց համար կգտնեն ոչ քիչ նորություններ:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ